ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
**ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

*Հարգելի՛ պարոն Միրզոյան,*

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածով և ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) փաթեթը:

Խնդրում ենք

ներկայացված Նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշման 25-րդ կետի՝ գրությանը կից ներկայացվում են՝

1) Նախագիծը (հիմնական զեկուցող՝ Նիկոլայ Բաղդասարյան),
2) Նախագծի ընդունման հիմնավորումը,
3) փոփոխվող իրավական ակտերի հոդվածների մասին տեղեկանքը:

Հարգանքներով՝

ՀՀ ԱԺ պատգամավորներ՝

Նիկոլայ Յու. Բաղդասարյան

Սերգեյ Մովսիսյան

Վիկտոր Ենգիբարյան

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

# «ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՈՒ ԴԻԱԿԻԶԱՐԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հուղարկավորությունների կազմակերպման եւ գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի փետրվարի 27-ի ՀՕ-40-Ն օրենքի 2-րդ հոդվածում`

1. 7-րդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություններով.
«*մահացածի հարազատներ* ՝ ազգակցական կապի մեջ գտնվող և մինչև նախապապը կամ նախատատն ընդհանուր նախնիներ ունեցող անձինք.
**ընտանիքի անդամներ** ՝ ծնողները, զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ և ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրները և քույրերը, պապը, տատը, թոռները, ինչպես նաև ամուսինը և ամուսնու ծնողները, վերջիններիս համար՝ փեսան և հարսը.»:
2. 8-րդ պարբերությունում «(ամուսին, հարազատներ, ազգականներ և այլն)» բառերը փոխարինել «մահացածի հարազատները կամ այլ անձինք:» բառերով:
3. 8-րդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություններ.
«**միասնական էլեկտրոնային շտեմարան** (այսուհետ շտեմարան)՝ միասնական էլեկտրոնային տվյալների բազա, որտեղ պահպանվում են Հայաստանի Հանրապետության բոլոր գերեզմանների վերաբերյալ սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ պահանջված անհրաժեշտ տվյալները:
**գերեզման օգտագործող**՝ այն անձը, ում անվամբ գրանցված է գերեզմանատեղը միասնական էլեկտրոնային շտեմարանում և դրա հիման վրա տրվել է գերեզմանատեղի վկայական.»:
4. 9-րդ պարբերությունում «իր անունով հաշվառված» բառերը փոխարինել «և գերեզման օգտագործողի համաձայնությամբ» բառերով:
5. 10-րդ պարբերությունում «ցանկությամբ» բառից հետո լրացնել «և գերեզման օգտագործողի համաձայնությամբ» բառերը
6. Ուժը կորցրած ճանաչել 12-րդ պարբերությունը:

**Հոդված 2.** Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

**«Հոդված 4. Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունները**

1. Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի իրավասություններն են՝
1) բնագավառի պետական քաղաքականության մշակումը և իրականացումը.
2) գերեզմանատների կառուցապատման և բարեկարգման տիպային ձևերի սահմանումը.
3) մասնավոր գերեզմանատան շահագործման համար թույլտվություն (այսուհետ՝ թույլտվություն) ստանալու համար անհրաժեշտ պայմանների և պահանջների սահմանումը և թույլտվության տալը.
4) գերեզմանի տրամադրման և շահագործման պայմանների, վերահուղարկավորման և վրահուղարկավորման թույլտվության, գերեզմանատեղերի հաշվառման և հուղարկավորությունների գրանցման կարգերի սահմանումը, ինչպես նաև սպասարկման պայմանագրերի տիպային ձևերի սահմանումները.
5) օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:»:

**Հոդված 3.** Օրենքի 6-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.
«գերեզմանատների տարածքների կառուցապատման նպատակով քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրում:»:
2. Ուժը կորցրած ճանաչել 7-րդ, 8-րդ, 9-րդ կետերը:
3. Լրացնել նոր 11-րդ կետ.
«11) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված պարբերությամբ և ծավալով տեղեկություն տրամադրել իր համայնքում կատարված հուղարկավորությունների վերաբերյալ՝ շտեմարանում գրանցելու համար.»:
4. Լրացնել նոր 12-րդ կետ.
«12) օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ.
1.1. համայնքն օգտագործում է այն գերեզմաններն, որոնք չունեն գերեզման օգտագործող: Սույն մասով նախատեսված դեպքերում համայնքն իրավունք ունի թույլատրել հուղարկավորել բացառապես այդ գերեզմանում հուղարկավորված ընտանիքի անդամին:»:

**Հոդված 4.** Օրենքի 8-րդ հոդվածում՝
1. 3-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.
«3. Մահացածի հուղարկավորությունն իրականացվում է իր բնակավայրի գերեզմանատան սահմաններում և գերեզման օգտագործողի համաձայնությամբ՝ ազատ գերեզմանում կամ գերեզման օգտագործողի համաձայնությամբ՝ այլ գերեզմանատանը՝ նախկինում մահացած հարազատի գերեզմանի առկայության դեպքում:»:
2. 3-րդ մասի 2-րդ պարբերությունում «հուղարկավորության կազմակերպումը ստանձնողների» բառերը փոխարինել «գերեզմանի օգտագործողի» բառերով:

**Հոդված 5.** Օրենքի 10-րդ հոդվածում՝

1. 1-ին մասում «ներկայացվում է» բառը փոխարինել «անհրաժեշտ է» բառով.
2. 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Յուրաքանչյուր թաղում կամ դիակիզում գրանցվում է շտեմարանում: Շտեմարանը գեներացնում է գերեզմանի վկայական, որը թաղման կամ աճյունասափորի տեղը հաստատող միակ փաստաթուղթն է:

Գերեզմանի վկայականի տրման կարգը և ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

3. 3-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Մահացածի մարմինը (աճյունը) հողին հանձնելու համար համայնքային գերեզմանատներում անվճար հիմունքներով դիմողի ցանկությամբ մեկ գերեզմանատեղի համար տրամադրվում է 2.5 քառակուսի մետր հողատարածք (2.5x1.0 մետր չափերով), իսկ ընտանիքի անդամների հուղարկավորությունը կազմակերպելու համար՝ 3x2.5 մետր չափերով հողատարածք:»:

4. 4-րդ մասում «առավելագույնը 6 քառակուսի մետր» բառերը փոխարինել «և 3x2.5 մետր չափերով» բառերով:
5. 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«Նոր գերեզմանատեղ հատկացվելու դեպքում գերեզման օգտագործողի մասնակցությամբ համապատասխան գերեզմանատան սահմաններում ճշտվում է նոր գերեզմանի տեղը:»:

**Հոդված 6.** Լրացնել նոր 13.1-րդ հոդված՝

«**Հոդված 13.1 Գերեզման օգտագործողը**

1. Գերեզման օգտագործողը հաշվառվում է շտեմարանում և իր անվամբ գեներացվում է գերեզմանի վկայական՝ իր օգտագործմանը հանձնած գերեզմանի վերաբերյալ:
2. Գերեզման օգտագործողն իրավունք ունի՝

1) կառուցապատել և բարելավել իր օգտագործմանը հանձնած գերեզմանը՝ լիազոր մարմնի կողմից հաստատված չափանիշներին համապատասխան,
2) հուղարկավորել և վերահուղարկավորել իր ընտանիքի անդամներին,
3) փոխանցել իր իրավունքներն այլ անձի, որի վերաբերյալ շտեմարանում կատարվում է համապատասխան փոփոխություններ,
4) ժառանգել իր օգտագործման իրավունքն իր ժառանգներից մեկին, ով առաջինն է հաշվառվում շտեմարանում,
5) օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

3. Գերեզմանի նոր օգտագործողն իրավունք ունի ստանալ գերեզմանի նոր վկայական:
4. Գերեզման օգտագործողը պատասխանատվություն է կրում սույն օրենքի և այլ իրավական ակտերով սահմանված կանոններին համապատասխան իրեն հատկացված գերեզմանատեղի կառուցման, բարեկարգման և շահագործման համար:

**Հոդված 7.** Օրենքի 18-րդ հոդվածում՝

1. 1-ին մասում հանել «գերեզմանների տրամադրումը, դրանց հաշվառումը,» բառերը:

**Հոդված 8.** Լրացնել նոր 18.1-րդ հոդված.

«**Հոդված 18.1 Գերեզմանի տրամադրումը և դրանց հաշվառումը.**

1. Գերեզման օգտագործողը՝ շտեմարանում մահվան վկայականի հիման վրա գերեզմանատնից իր անվամբ ամրագրում է հերթական գերեզմանը:
2. Գերեզմանի օգտագործողի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված վճարի առկայության դեպքում վերջինս հնարավորություն է ունենում նույն կարգով ընտրելու սույն օրենքով սահմանված չափով լրացուցիչ հողատարածք:
3. Շտեմարանում պահպանվում են բոլոր գերեզմանատների գերեզմանատեղերի կորդինատները, գերեզման օգտագործողի տվյալները, գերեզմանում հուղարկավորված հանգուցյալների տվյալները, իսկ գերեզմանի օգտագործողի փոփոխման դեպքում նաև գերեզմանի նոր օգտագործողի տվյալները:
4. Շտեմարանի պահպանվող տվյալները պահպանվում են անժամկետ:»:

**Հոդված 9.** Օրենքի 19.1-րդ հոդվածի 1-ին մասում «համայնքի ղեկավարի» բառերը փոխարինել «լիազոր մարմնի» բառերով:

**Հոդված 10.** Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ին:
2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասի 12-րդ կետը ուժի մեջ է մտնում շտեմարան ստեղծելու պահից:
3. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի փոփոխություններն ուժի մեջ են մտնում շտեմարանի ստեղծելու պահից:
4. Սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի փոփոխություններն ուժի մեջ են շտեմարանի ստեղծելու պահից:
5. Սույն օրենքի 10-րդ հոդվածը ուժի մեջ է մտնում շտեմարանի ստեղծելու պահից:
6. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում բոլոր համայնքները պարտավոր են իրենց տարածքում գտնվոր գերեզմանատները գրանցել Հայաստանի Հանրապետության կադաստրային կոմիտեում:
7. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում բոլոր համայնքները պարտավոր են տրամադրել իրենց տարածքում գտնվոր գերեզմանատների վերաբերյալ այն տվյալները որոնք անհրաժեշտ են միասնական էլեկտրոնային շտեմարանում գրանցելու համար:
8. Հուղարկավորության կազմակերպումը ստանձնողները կարող են գրանցվել շտեմարանում որպես գերեզման օգտագործողներ և ստանալ գերեզմանի նոր վկայականներ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: Սույն մասում նշված ժամկետում հուղարկավորության կազմակերպումը ստանձնողի կողմից շտեմարանում որպես գերեզման օգտագործող չգրանցվելու դեպքում տվյալ գերեզմանի

օգտագործման իրավունքն անցնում է համայնքին՝ մինչև տվյալ գերեզմանում հուղարկավորված մահացածի հարազատներից որևէ մեկը գրանցվի շտեմարանում:
9. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը առկա գերեզմանատեղերի վերաբերյալ գերեզման օգտագործողներին են տրվում գերեզմանի վկայականներ, որտեղ արտացոլվում են տվյալ գերեզմանատեղիի փաստացի չափերը:
10. Այն գերեզմանների վերաբերյալ, որոնք կառուցվել են գերեզմանատների սահմաններից դուրս կամ գերեզմանատան հիմնական ճանապարհի վրա գերեզմանի վկայականներ չեն կարող տրվել և այդ գերեզմաններում չի կարող նոր հուղարկավորություն կատարվել:
11. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավոր է անհրաժեշտ լրացումներ և փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների մեջ՝ այն համապատասխանեցնելով սույն օրենքի պահանջներով:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՈՒ ԴԻԱԿԻԶԱՐԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Formatted: Font: Sylfaen, 12 pt, Bold

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.
**հուղարկավորություն՝** մարդու մահից հետո նրա մարմինը (աճյունը) կամ մահացածի աճյունասափորը հողին հանձնելու կամ աճյունասափորը հուշապատի մեջ տեղադրելու ծիսական արարողություն.
**գերեզմանատուն՝** քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին համապատասխան տրամադրված, հատուկ նշաններով առանձնացված հողատարածք գերեզմանստեղեր տրամադրելու և գերեզմանները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով պահպանելու համար.
**մասնակի փակ գերեզմանատուն՝** գերեզմանատուն, որտեղ սպառված են նոր գերեզմանների տրամադրման համար հողատարածքները, և որտեղ նախկինում հատկացված գերեզմաններում կարող է իրականացվել վրահուղարկավորություն կամ նոր հուղարկավորություն՝ գերեզմանում ազատ տարածքի առկայության դեպքում.
**փակ գերեզմանատուն՝** գերեզմանատուն, որտեղ հուղարկավորություններն ընդհանրապես արգելված են.
**պանթեոն՝** գործող գերեզմանատների սահմաններից դուրս առանձնացված տարածք՝ հասարակության և պետության հանդեպ նշանակալի ծառայություններ մատուցած անձանց հուղարկավորելու համար.
**բաց գերեզմանատուն՝** գերեզմանատուն, որտեղ առկա են նոր գերեզմանների տրամադրման համար ազատ հողատարածքներ.
**գերեզման՝** գերեզմանատեղ, որտեղ իրականացվել է հուղարկավորություն.
*մահացածի հարազատներ*՝ ազգակցական կապի մեջ գտնվող և մինչև նախապապը կամ նախատատը ընդհանուր նախնիներ ունեցող անձինք.
**ընտանիքի անդամներ**՝ ծնողները, զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ և ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրները և քույրերը, պապը, տատը, թոռները, ինչպես նաև ամուսինը և ամուսնու ծնողները, վերջիններիս համար՝ փեսան և հարսը.
**հուղարկավորության կազմակերպումը ստանձնողներ**_՝ մահացածի կամքով նշված կամ դրա բացակայության դեպքում հուղարկավորության արարողության կազմակերպումը կամովին ստանձնած անձինք ~~(ամուսին, հարազատներ, ազգականներ և այլ~~ մահացածի հարազատները կամ այլ անձինք).

Formatted: Font: Sylfaen, 12 pt, Bold
Formatted: Font: Sylfaen, 12 pt
Formatted: Indent: First line: 0 cm
Formatted: Font: Sylfaen, 12 pt, Bold
Formatted: Left, Pattern: Clear (White)
Formatted: Font: Sylfaen, 12 pt
Formatted: Font color: Black
Formatted: Font: Bold

**միասնական էլեկտրոնային շտեմարան** (այսուհետ շտեմարան)՝ միասնական էլեկտրոնային տվյալների բազա, որտեղ պահպանվում են Հայաստանի Հանրապետության բոլոր գերեզմանների վերաբերյալ սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ պահանջված անհրաժեշտ տվյալները։

**գերեզմանի օգտագործող**՝ այն անձը, ում անվամբ գրանցված է գերեզմանատեղը միասնական էլեկտրոնային շտեմարանում և դրա հիման վրա տրվել է գերեզմանատեղի վկայական.

**վրահուղարկավորում**՝ հուղարկավորության կազմակերպումը ստանձնած անձի ցանկությամբ և գերեզմանի օգտագործողի համաձայնությամբ ~~իր անունով հաշվառված~~ գերեզմանատեղում նախկինում մահացածի գերեզմանի վրա նոր հուղարկավորություն կազմակերպելը.

**վերահուղարկավորում**՝ հուղարկավորության կազմակերպումը ստանձնած անձի ցանկությամբ և գերեզմանի օգտագործողի համաձայնությամբ մահացածի մարմինը (աճյունը) գերեզմանից այլ գերեզման տեղափոխելը.

**դիակիզում**՝ մահացածի մարմնի կիզումը դրա համար նախատեսված հատուկ տեղում (դիակիզարանում).

~~**մահացածի հարազատներ**՝ պապը, տատը, ծնողները, զավակները, ամուսինը, քույրը, եղբայրը և թոռները.~~

**քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարություն**՝ ազգային և կրոնական ավանդույթների համաձայն՝ մարդու մահից հետո նրա մարմինը (աճյունը) կամ մահացածի աճյունասափորը հողին հանձնելուց կամ աճյունասափորը խուցապատում տեղադրելուց առաջ հրաժեշտի արարողություն.

**մասնավոր գերեզմանատուն**՝ քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին համապատասխանող, անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձանց կողմից սույն օրենքով սահմանված կարգով կազմավորված և շահագործվող գերեզմանատուն.

**գերեզմանատան կառավարիչ**՝ համայնքային գերեզմանատների համար՝ համայնքի ղեկավարը կամ նրա լիազորած անձը կամ համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված ոչ առևտրային կազմակերպությունը, պետական գերեզմանատների համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմինը, իսկ մասնավոր գերեզմանատների համար՝ գերեզմանատունը շահագործող անձը.

**ընտանեկան գերեզման**՝ սույն օրենքով սահմանված չափով մեկ ընտանիքին հատկացվող գերեզմանատեղ։

*(2-րդ հոդվածը լրաց. 26.02.15 ՀՕ-12-Ն, խմբ., փոփ., լրաց. 29.04.15 ՀՕ-27-Ն)*

-

~~**Հոդված 4. Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունները**~~

~~*(վերնագիրը խմբ. 29.04.15 ՀՕ-27-Ն)*~~

**Formatted:** Font: Bold

~~1. Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի իրավասություններն են՝~~

~~1) բնագավառի պետական քաղաքականության մշակումը և իրականացումը.~~

~~2) օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասությունների սահմաններում վերահսկողության իրականացումը.~~

~~3) մասնավոր գերեզմանատան շահագործման համար թույլտվություն (այսուհետ՝ թույլտվություն) ստանալու համար անհրաժեշտ պայմանների և պահանջների սահմանումը.~~

~~4) գերեզմանի տրամադրման և սպասարկման պայմանագրերի, վերահուղարկավորման և վրահուղարկավորման թույլտվության, գերեզմանատեղերի հաշվառման և հուղարկավորությունների գրանցման մատյանների տիպային ձևերի սահմանումը.~~

~~5) օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:~~

Field Code Changed

Formatted: No underline, Font color: Auto

Formatted: No underline, Font color: Auto

**«Հոդված 4. Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունները**

1. Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի իրավասություններն են՝

1) բնագավառի պետական քաղաքականության մշակումը և իրականացումը.

2) գերեզմանատների կառուցապատման և բարեկարգման տիպային ձևերի սահմանումը.

3) մասնավոր գերեզմանատան շահագործման համար թույլտվություն (այսուհետ՝ թույլտվություն) ստանալու համար անհրաժեշտ պայմանների և պահանջների սահմանումը և թույլտվության տալը.

4) գերեզմանի տրամադրման և շահագործման պայմանների, վերահուղարկավորման և վրահուղարկավորման թույլտվության, գերեզմանատեղերի հաշվառման և հուղարկավորությունների գրանցման կարգերի սահմանումը, ինչպես նաև սպասարկման պայմանագրերի տիպային ձևերի սահմանումները.

5) օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 6. Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները**

*(վերնագիրը խմբ. 29.04.15 ՀՕ-27-Ն)*

1. Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառում համայնքի ղեկավարի իրավասություններն են՝

1) համայնքային գերեզմանատներ և դիակիզարաններ կազմավորելը, շահագործելը և պահպանելը՝ քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերի պահանջներին համապատասխան.

2) համայնքի վարչական տարածքում մահացած, հուղարկավորության կազմակերպման ստանձնողներ չունեցող քաղաքացիների հուղարկավորություն կամ դիակիզում կազմակերպելը.

3) ~~գերեզմանատների տարածքների կառուցապատման նպատակով քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրման և համաձայնեցման փուլում քաղաքաշինական փաստաթղթերում շենքերին և շինություններին (համապատասխան մակերեսներով և քանակով) առաջադրվող պահանջների և պայմանների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելը.~~
գերեզմանատների տարածքների կառուցապատման նպատակով քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրում

4) գերեզմանատների կառուցապատման հատակագծեր (օգտագործման սխեմաներ) մշակելը և հաստատելը.

5) նոր գերեզմանատների կազմակերպման համար հողամասեր հատկացնելը, գոյություն ունեցող գերեզմանատների սահմանները փոփոխելը և գերեզմանատների փակման վերաբերյալ որոշումներ ընդունելը.

6) գերեզմանատների զբաղեցրած հողերի կառուցապատման սխեմաների մշակման, դրանց սահմանների փոփոխման, նոր գերեզմանատների կազմակերպման աշխատանքները համակարգելը.

~~7) հուղարկավորությունները, վրահուղարկավորությունները, վերահուղարկավորությունները կազմակերպելու, գերեզմանատների, դիակիզարանների շահագործման և հուղարկավորությունների հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրության, ինչպես նաև գերեզմանատների տարածքների կառուցապատման համար (շինարարության թույլտվություն ստանալուց հետո՝ շինարարության իրականացման փուլում) քաղաքաշինական փաստաթղթերում շենքերին, շինություններին (համապատասխան մակերեսներով և քանակով) առաջադրվող պահանջների և պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելը.~~

~~8) մասնավոր գերեզմանատների տարածքների կառուցապատման համար (շինարարության թույլտվություն ստանալուց հետո՝ շինարարության իրականացման փուլում) քաղաքաշինական փաստաթղթերում շենքերին, շինություններին (համապատասխան մակերեսներով և քանակով) առաջադրվող պահանջների և պայմանների խախտման դեպքում դրանք ողջամիտ ժամկետում (չի կարող գերազանցել 12 ամիսը) վերացնելու համար կարգադրագիր տալը.~~

~~9) մասնավոր գերեզմանատան շահագործման համար տրված թույլտվության պայմանների և պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելը.~~
10) սույն օրենքով սահմանված դեպքերում՝ մասնավոր գերեզմանատան կառավարիչ չլինելու պարագայում, մասնավոր գերեզմանատան կառավարչի գործառույթներ իրականացնելը.~~:~~
11) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված պարբերությամբ և ծավալով տեղեկություն տրամադրել իր համայնքում կատարված հուղարկավորությունների վերաբերյալ՝ շտեմարանում գրանցելու համար.
12) օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ.
1.1. համայնքն օգտագործում է այն գերեզմանները, որոնք չունեն գերեզման օգտագործող: Սույն մասով նախատեսված դեպքերում համայնքն իրավունք ունի թույլատրել հուղարկավորել բացառապես այդ գերեզմանում հուղարկավորված ընտանիքի անդամին:
2. Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են սույն օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով վերապահված այլ լիազորություններ:
*(6-րդ հոդվածը խմբ. 29.04.15 ՀՕ-27-Ն)*

Formatted: Font: (Default) Sylfaen, 12 pt, Bold, Italic

**Հոդված 8. Հուղարկավորությունների իրականացումը**

1. Հայաստանի Հանրապետության տարածքում հուղարկավորությունը իրականացվում է մահացածի մարմինը (աճյունը) գերեզմանատների սահմաններում տրամադրված գերեզմանատեղերում հողին հանձնելու կամ դիակիզման միջոցով:
Սանիտարահամաճարակային իրավիճակի վտանգ առաջանալու դեպքում մահացածների մարմինները 2 օրվա ընթացքում ենթակա են դիակիզման Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:
Դիակիզումը կարող է իրականացվել նաև մահացածի կամ հուղարկավորությունը ստանձնողների կամքի գրավոր արտահայտությամբ:
2. Հաշվի առնելով հասարակության և պետության հանդեպ մահացածի ունեցած ծառայությունները՝ գործող գերեզմանատների սահմաններից դուրս՝ առանձնացված տեղերում, հուղարկավորությունը կարող է կազմակերպվել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և դեպքերում:
3. ~~Մահացածի կամքի գրավոր արտահայտությունը հուղարկավորության կազմակերպման վերաբերյալ կարող է իրականացվել իր նշած բնակավայրի գերեզմանատան սահմաններում՝ ազատ գերեզմանատեղի կամ նախկինում մահացած հարազատի գերեզմանի առկայության դեպքում:~~

Formatted: Not Highlight

3. Մահացածի հուղարկավորությունն իրականացվում է իր բնակավայրի գերեզմանատան սահմաններում և գերեզման օգտագործողի համաձայնությամբ՝ ազատ գերեզմանում կամ գերեզման օգտագործողի համաձայնությամբ՝ այլ գերեզմանատանը՝ նախկինում մահացած հարազատի գերեզմանի առկայության դեպքում:
Վրահուղարկավորումը կարող է իրականացվել գոյություն ունեցող գերեզմանում՝ հուղարկավորության կազմակերպումը ստանձնողների գերեզմանի օգտագործողի համաձայնությամբ, այդ տեղում վերջին հուղարկավորումից 15 տարի անց՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:
Մահացածի կամ նրա հուղարկավորության կազմակերպումը ստանձնողի՝ հուղարկավորության կազմակերպման վերաբերյալ կամքի արտահայտության իրականացման անհնարինության կամ նման կամքի բացակայության դեպքում հուղարկավորությունը իրականացվում է մահացածի կենդանության օրոք նրա հաշվառման բնակավայրի համար նախատեսված գերեզմանատանը:
Այդ բնակավայրում գերեզմանատուն չլինելու դեպքում հուղարկավորությունը իրականացվում է բնակավայրին ստավել մոտ գտնվող գերեզմանատանը:
Հուղարկավորությունը կարող է կատարվել մասնավոր գերեզմանատանը մահացածի ցանկությամբ կամ նրա հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի ցանկությամբ:
*(8-րդ հոդվածը փոփ., լրաց. 29.04.15 ՀՕ-27-Ն)*

Formatted: Not Highlight

Formatted: Not Highlight

### Հոդված 10. Հուղարկավորումը և վերահուղարկավորումը

1. Հուղարկավորության իրականացման համար անհրաժեշտ է ներկայացվում է միայն քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմինների տված մահվան վկայական:
2. Յուրաքանչյուր թաղում կամ դիակիզում գրանցվում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնի թաղումների կամ դիակիզումների գրանցման մատյանում, որն արխիվում պահվում է անժամկետ:
Մատյանում գրանցումից հետո գերեզմանատան տնօրինությունը տալիս է իր դրոշմակնիքով կնքված գերեզմանի վկայական, որը թաղման կամ աճյունասափորի տեղը հաստատող միակ փաստաթուղթն է:
Ընտանեկան գերեզմանատեղում հուղարկավորության փաստաթղթերի ձևակերպումը կատարվում է գերեզմանի վկայականի (բնօրինակի) կամ գրանցամատյանում նախկինում կատարված գրանցումների հիման վրա:
Գերեզմանի վկայականի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
Յուրաքանչյուր թաղում կամ դիակիզում գրանցվում է շտեմարանում: Շտեմարանը ձևավորացնում է գերեզմանի վկայական, որը թաղման կամ աճյունասափորի տեղը հաստատող միակ փաստաթուղթն է:

Formatted: Indent: Left: 0 cm, Tab stops: Not at 0.63 cm + 17.14 cm

Գերեզմանի վկայականի տրման կարգը և ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. ~~Մահացածի մարմինը (աճյունը) հողին հանձնելու համար համայնքային գերեզմանատներում անվճար հիմունքներով դիմողի ցանկությամբ մեկ գերեզմանատեղի համար տրամադրվում է 2.5 քառակուսի մետր հողատարածք (2.5x1.0 մետր չափերով), իսկ ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար՝ առավելագույնը 12,5 քառակուսի մետր հողատարածք:~~

Մահացածի մարմինը (աճյունը) հողին հանձնելու համար համայնքային գերեզմանատներում անվճար հիմունքներով դիմողի ցանկությամբ մեկ գերեզմանատեղի համար տրամադրվում է 2.5 քառակուսի մետր հողատարածք (2.5x1.0 մետր չափերով), իսկ ընտանիքի անդամների հուղարկավորությունը կազմակերպելու համար՝ 3x2.5 մետր չափերով հողատարածք:

Աճյունասափորը (մահացածի մարմնի դիակիզումից հետո) հողին հանձնելու դեպքում համայնքային գերեզմանատներում անվճար հիմունքներով մեկ գերեզմանատեղի համար տրամադրվում է 1 քառակուսի մետր հողատարածք (1.0x1.0 մետր չափերով), կամ աճյունասափորը տեղադրվում է հուշապատի մեջ:

4. Հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի ցանկությամբ անվճար հիմունքներով տրամադրվող գերեզմանատեղից բացի, համայնքային գերեզմանատանը կարող է վճարովի հիմունքներով տրամադրվել ~~առավելագույնը 6 քառակուսի մետր~~ և 3x2.5 մետր չափերով—հողատարածք՝ գերեզմանատան կառուցապատման սխեմայով համապատասխան տարածքներ նախատեսված լինելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և վճարի դիմաց:

4.1. Գերեզմաններում տապանաքարերի, հուշաքարերի, հուշարձանների, գերեզմանի սահմանային եզրաքարերի տեղադրման համար իրականացվող շինարարական աշխատանքների համար շինարարական թույլտվություն չի պահանջվում:

5. ~~Նոր գերեզմանատեղ հատկացվելու դեպքում հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի մասնակցությամբ համապատասխան գերեզմանատան սահմաններում ճշտվում է նոր գերեզմանի տեղը, և գերեզմանատան տնօրինության կողմից տրվում է գերեզմանի վկայական:~~

Նոր գերեզմանատեղ հատկացվելու դեպքում գերեզման օգտագործողի մասնակցությամբ համապատասխան գերեզմանատան սահմաններում ճշտվում է նոր գերեզմանի տեղը:

6. Մահացածի հարազատների ցանկությամբ մահացածի մարմինը (աճյունը) կարող է վերահուղարկավորվել՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

7. Ինքնասպանության, անհայտ պատճառից հանկարծամահության, մարմնական վնասվածքների հետևանքով տեղի ունեցած մահվան և մահը հանցագործության հետևանքով տեղի ունենալու կասկածի դեպքերում մահացածի մարմնի (աճյունի) հուղարկավորումը չի թույլատրվում առանց դատաբժշկական մարմինների թույլտվության:

2. Համայնքներում խուղարկավորության կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են ստեղծվել ոչ առևտրային կազմակերպություններ:
*(18-րդ հոդվածը խմբ. 29.04.15 ՀՕ-27-Ն)*

Հոդված 18.1 Գերեզմանի տրամադրումը և դրանց հաշվառումը

1. Գերեզմանի օգտագործողը` շտեմարանում մահվան վկայականի հիման վրա գերեզմանատնից իր անվամբ ամրագրում է հերթական գերեզմանը:
2. Գերեզմանի օգտագործողի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված վճարի առկայության դեպքում վերջինս հնարավորություն է ունենում նույն կարգով ընտրելու սույն օրենքով սահմանված չափով լրացուցիչ հողատարածք:
3. Շտեմարանում պահպանվում են բոլոր գերեզմանատների գերեզմանատեղերի կորդինատները, գերեզմանի օգտագործողի տվյալները, գերեզմանում հուղարկավորված հանգուցյալների տվյալները, իսկ գերեզմանի օգտագործողի փոփոխման դեպքում նաև գերեզմանի նոր օգտագործողի տվյալները:
4. Շտեմարանի պահպանվող տվյալները պահպանվում են անժամկետ:

Formatted: Font: Not Bold, Not Italic
Formatted: Font: Not Bold
Formatted: Font: Not Bold
Formatted: Font: Not Bold
Formatted: Font: Not Bold
Formatted: Tab stops: 0.63 cm, Left + 17.14 cm, Left
Formatted: Font: Not Bold
Formatted: Font: Not Bold
Formatted: Font: Not Bold
Formatted: Font: Not Bold
Formatted: Font: Not Bold
Formatted: Font: Not Bold

**Հոդված 19.1. Մասնավոր գերեզմանատների կազմակերպումը և դրանց գործունեությունը**

1. Մասնավոր գերեզմանատները կազմակերպվում են սույն օրենքի 19-23-րդ հոդվածների դրույթների համաձայն` իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից` սեփականության կամ կառուցապատման իրավունքով իրենց տրամադրված նվազագույնը 3 հա տարածքով հողամասերում: Իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը սույն օրենքով նախատեսված պահանջների և պայմանների բավարարման դեպքում մասնավոր գերեզմանատների շահագործման գործունեություն իրականացնելու համար լիազոր մարմնի ~~համայնքի ղեկավարի~~ կողմից ստանում են թույլտվություն` Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:
Կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասում մասնավոր գերեզմանատան շահագործումը կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ կառուցապատման պայմանագրով հստակ սահմանված է, որ հողամասի սեփականատերը հողամասը կառուցապատման է տրամադրել մասնավոր գերեզմանատուն կազմակերպելու նպատակով:
Մասնավոր գերեզմանատուն շահագործելու թույլտվության տրամադրումը կարող է մերժվել, եթե դիմողի կողմից չեն պահպանվել մասնավոր գերեզմանատների կազմակերպման և գործունեության համար անհրաժեշտ` սույն օրենքով և լիազոր

մարմնի սահմանած պահանջները և պայմանները: Թույլտվության տրամադրման համար գանձվում է տարեկան տեղական տուրք՝ օրենքով սահմանված կարգով և չափերով:
2. Մասնավոր գերեզմանատները կարող են կազմավորվել հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների հիման վրա՝ կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի վրա:
3. Մասնավոր գերեզմանատան կազմակերպումը քաղաքաշինական գործունեության տեսակ է և ենթակա է օրենքով սահմանված կարգով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
4. Մասնավոր գերեզմանատան սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը պարտավոր է՝
1) գերեզմանատան տարածքում ունենալ՝
ա. շուրջօրյա աշխատանքային ռեժիմով դիակների պահման վայր՝ մինչև հոգեհանգստի և հուղարկավորության իրականացումը,
բ. առնվազն մեկ հոգեհանգստի սրահ՝ լիազոր մարմնի սահմանած չափով,
գ. ավտոկայանատեղ՝ լիազոր մարմնի սահմանած չափանիշներին համապատասխան,
դ. հուշապատ՝ աճյունասափորների տեղադրման համար,
ե. ծաղիկների, ծաղկեպսակների և հոգեհանգստի ու հուղարկավորության համար անհրաժեշտ այլ պարագաների վաճառքի սրահ,
զ. դիակիզարան կամ որևէ գործող դիակիզարանի օգտագործման կամ դրա ծառայություններից օգտվելու պայմանագիր,
է. ոռոգման և խմելու ջրի համակարգ, հասարակական զուգարան.
2) ունենալ առնվազն մեկ ավտոդիատար.
3) պարսպապատել գերեզմանատան տարածքը.
4) պահպանել բնապահպանական և սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները:
5. Մասնավոր գերեզմանատան դեպքում իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը գերեզմանատան տարածքում կարող է ունենալ հոգեհացի մատուցման սրահ:
6. Մասնավոր գերեզմանատան տարածքը օտարելու կամ կառուցապատման իրավունքի փոխանցման դեպքում նոր սեփականատիրոջը կամ կառուցապատման իրավունք ձեռք բերողին պետք է միաժամանակ փոխանցվեն նաև սույն օրենքի 19.2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանագրերից ծագող իրավունքները և պարտավորությունները: Սույն մասի պահանջները չպահպանելու դեպքում պայմանագիրը առ ոչինչ է:
7. Գերեզմանատան սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձի վերակազմակերպման կամ անհատ ձեռնարկատիրոջ մահվան դեպքում սույն օրենքի 19.2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանագրերից ծագող իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են այն անձին, որին փոխանցվում է գերեզմանատան տարածքի նկատմամբ շահագործման իրավունքը:

8. Մասնավոր գերեզմանատների տարածքը՝ դրա վրա առկա օժանդակ շինություններով, կարող է օտարվել միայն որպես մեկ գույքային միավոր:
9. Մասնավոր գերեզմանատան շահագործողը պարտավոր է գերեզմանատան անձնակազմի անդամներից նշանակել մեկ պատասխանատու անձ՝ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից մատուցվող բոլոր տեսակի ծառայությունների մատուցման վերաբերյալ հարցերը հուղարկավորության կազմակերպումն ստանձնող անձի հետ քննարկելու համար:
10. Ծառայությունները պատշաճ կազմակերպելու նպատակով մասնավոր գերեզմանատան շահագործողն իր ներքին իրավական ակտերով պետք է հաստատի անձնակազմի հագուստի, ինչպես նաև անձնակազմի՝ հուղարկավորության, հոգեհանգստի և հոգեհացի մասնակիցների հետ վարվեցողության կանոններ:
*(19.1-ին հոդվածը լրաց. 29.04.15 ՀՕ-27-Ն)*

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

# ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 12-ի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 156.1-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Գերեզմանն օգտագործողի կողմից գերեզմանի կառուցապատման, բարեկարգման և շահագործման օրենսդրությամբ սահմանված կանոնները, այդ թվում՝ քաղաքաշինական նորմերը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:»:

**Հոդված 2.** Օրենքի 3-րդ մասում հանել «կամ նրանց լիազորած անձանց կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպության» և «ինչպես նաև ընտանեկան գերեզմանի» բառերը:

**Հոդված 3.** Լարցնել նոր 13-րդ մաս. «13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված ժամկետներում իրենց տարածքներում գտնվող գերեզմանատները Հայաստանի Հանրապետության կադաստրային կոմիտեում չգրանցելը, ինչպես նաև էլեկտրոնային միասնական շտեմարանում օրենսդրությամբ սահմանված ժամկետներում անհրաժեշտ տվյալների չտրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:»:

**Հոդված 4.** Լարցնել նոր 14-րդ մաս. «14. Սույն հոդվածով բոլոր մասերով նախատեսված նույն արարքները, եթե կատարվել են կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ, վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:»:

**Հոդված 5.** Օրենսգրքի 219.1-րդ հոդվածի 3-րդ մասում հանել «156.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ մասնավոր գերեզմանատների մասով,» բառերը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՈՒ ԴԻԱԿԻԶԱՐԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՕՐԵՆՔԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

I. **Հայաստանի Հանրապետությունում հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման նորմատիվ իրավական ակտերը:**

1. Խորհրդային ժամանակահատվածում հուղարկավորությունների կազմակերպումը և գերեզմանատների շահագործումը կարգավորվում էր՝ Հայկական մինիստրների սովետի 1975 թվականի հուլիսի 31 թիվ 444 որոշմամբ (այսուհետ՝ Որոշում), որը կարգավորում էր հուղարկավորության կազմակերպման և գերեզմանատները շահագործող հետ կապված հարցերը: Մինչև՝ **17.04.2006թ.** պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ղեկավարվել են վերը նշված Որոշմամբ:

2. 2006 թվականի փետրվարի 27-ին ընդունվել է «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետությունում օրենքը (այսուհետ՝ Օրենք), որը ուժի մեջ է մտել՝ 17.04.2006թ.:

3. Օրենքի պահանջների կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվել են մի շարք որոշումներ, այդ թվում՝ 23 նոյեմբերի 2006 թվական N 1910-Ն «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգերը, կանոնները և գերեզմանի վկայականի ձևը սահմանելու մասին», ինչպես նաև 08 նոյեմբերի 2007 թվականին N 1301-Ն «Սանիտարահամաճարակային իրավիճակների վտանգ առաջանալու դեպքում մահացածների մարմինների դիակիզման, գերեզմանատների վնասազերծման և տեղափոման ու վրահուղարկավորման կարգերը հաստատելու մասին» որոշումները:

4. Օրենքի կարգավորման առարկան է հանդիսանում՝ գերեզմանատների և դիակիզարանների շահագործման հետ կապված իրավահարաբերությունները և սահմանում է հուղարկավորության արարողությունների կազմակերպման պետական կարգավորման հիմնական սկզբունքներն ու պայմանները:

5. 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1671-Ն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվել է, որ Օրենքով նախատեսված պետական կառավարման լիազոր մարմինն է հանդիսանում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը: Օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է լիազոր մարմնի իրավասությունը:

6. Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների շահագործման հիմնական գործառույթներն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց շրջանակը սահմանվում է Օրենքի 6-րդ հոդվածով:

7. Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են Օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով վերապահված այլ լիազորություններ:

## II. Հայաստանի Հանրապետությունում հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման ներկա իրավիճակը

8. Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում և Երևան քաղաքում գեռեզմանատների քանակը 1.702-ն է, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 3.907 հեկտար (Տես՝ հավելված 1):

9. Երևան քաղաքում գերեզմատները գտնվում են հետևյալ վարչական շրջաններում՝ Էրեբունի, Նուբարաշեն, Աջափնյակ, Քանաքեռ Զեյթուն, Նորք-Մարաշ, Ավան, Դավիթաշեն, Մալաթիա-Սեբաստիա: Ներկա պահին շահագործվում են 20-ը գերեզմանատուն, իսկ մեկ գերեզմանատուն չի շահագործվում, քանի որ տարածքը բարեկարգման անհրաժեշտություն ունի (Տես՝ հավելված 2):

10. 1996 թվականին մայիսի 13-ին Երևանի քաղաքապետի թիվ 44 որոշմամբ հիմնադրվել է «Բնակչության հատուկ սպասարկման» պետական ձեռնարկություն, որի իրավահաջորդը ներկայումս հանդիսանում է «Բնակչության հատուկ սպասարկման» Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ՀՈԱԿ):

11. ՀՈԱԿ-ը հիմնական խնդիրներն են, որոնք ամրագրված են կանոնադրության մեջ՝
1) գերեզմանատների տարածքի բարեկարգում, այդ թվում լուսավորության, ջրամատակարարման կազմակերպում և ասֆալտապատում,
2) գերեզմանատան տարածքի պարսպապատում,
3) գերեզմանների տարածքից դուրս աղբի մաքրում և աղբահանության կազմակերպում,
4) գերեզմանների հաշվառում և հուղարկավորությունների վերաբերյալ մատյանների վարում,
5) տեղեկատվության պահպանում և տրամադրում,

6) գերեզմանի վկայականի տրամադրում:

12. ՀՈԱԿ-ը ներկայումս մատուցում է հետևյալ վճարովի ծառայությունները, որոնք ևս նախատեսված են ՀՈԱԿ-ի կանոնադրությամբ և որոնցից օգտվելը կամավոր է՝
1) գերեզմանափոսի փորում.
2) դիատարի տրամադրում.
3) դագաղների տրամադրում.
4) գերեզմանի բարեկարգում

13. ՀՈԱԿ-ը հուղարկավորությունից հետո պատրաստում և տեղադրում գերեզմանաթմբի վրա մետաղյա ցուցանակ, որի ծախսերը փոխհատուցվում են Երևանի քաղաքապետարանի բյուջեից:

14. Վերը նշված ծառայություններից հիմնականում մատուցվում է գերեզմանափոսի փորման ծառայությունը, որի արժեքը կազմում է՝ 26.900 ՀՀ դրամ: Այս ծառայությունը մատուցվում է կամավոր հիմունքներով և հուղարկավորություն կազմակերպումը ստանձնող անձը կարող է չօգտվել նշված ծառայությունից:

15. ՀՈԱԿ-ը, բացի վերը թվարկված ծառայություններից և Երևան քաղաքի բյուջեից հատկացվող փոխհատուցումից այլ ֆինանսական աղբյուրներ չունի:

16. ՀՈԱԿ-ի 2019թ. բյուջեն կազմել է՝ 219. 612 ՀՀ դրամ, որից ծառայության մատուցման դիմաց ստացվել է 207. 400 ՀՀ դրամ, իսկ Երևանի քաղաքապետարանից որպես դրամաշնոր հատկացվել է 12. 212 ՀՀ դրամ: Նույն տարի ՀՈԱԿ-ը ծախսել է 207. 700 ՀՀ դրամ, իսկ 11. 912 ՀՀ դրամ տեղափոխել է հաջորդ տարվա բյուջե:

17. ՀՈԱԿ-ի աշխատողների քանակը 130 անձինք են, որոնցից 30-ն աշխատում են վարչակազմում, իսկ մնացած անձինք՝ սպասարկում են գերեզմանատները: Նշված թիվը փոփոխական է և այն կարող է շուրջ 20%-ով փոփոխվել:
18. Երևան քաղաքում գերեզմանատների ընդանուր մակերեսը կազմում է շուրջ **5.603** քկմ (թիվը վերցվել է վերը նշված հատակագծերից, որոնք չեն համապատասխանում փաստացի տարածքների հետ), որը կազմում է Երևան քաղաքի **2,5%** (Երևանի տարածքը կազմում է **223.000 քկմ**):

## III.Մասնավոր գերեզմանատների կազմավորումը և գործունեությունը

19. Մասնավոր գերեզմանատները կազմավորվում են Օրենքի 19-23-րդ հոդվածների դրույթների համաձայն, որոնք Օրենքի 19.1-րդ հոդվածի համաձայն պետք է բավարարի հետևյալ պահանջներին՝
1) շուրջօրյա աշխատանքային ռեժիմով դիակների պահման վայր՝ մինչև հոգեհանգստի և հուղարկավորության իրականացումը,
2) առնվազն մեկ հոգեհանգստի սրահ՝ լիազոր մարմնի սահմանած չափով,
3) ավտոկայանատեղ՝ լիազոր մարմնի սահմանած չափանիշներին համապատասխան,
4) հուշապատ՝ աճյունասափորների տեղադրման համար,

5) ծաղիկների, ծաղկեպսակների և հոգեհանգստի ու հուղարկավորության համար անհրաժեշտ այլ պարագաների վաճառքի սրահ,
6) դիակիզարան կամ որևէ գործող դիակիզարանի օգտագործման կամ դրա ծառայություններից օգտվելու պայմանագիր,
7) ոռոգման և խմելու ջրի համակարգ, հասարակական զուգարան,
8) ունենալ առնվազն մեկ ավտոդիատար,
9) պարսպապատել գերեզմանատան տարածքը,
10) պահպանել բնապահպանական և սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները:

20. Ներկայումս վերը նշված պահանջներին բավարարող որևէ մասնավոր գերեզմանատուն Հայաստանի Հանրապետությունում չկա:

## IV. Հայաստանի Հանրապետությունում հուղարկավորությունների կազմակերպումը և փաստացի իրավիճակը

21. Հուղարկավորության կազմակերպման ստանձնողի անձի առաջին քայլը Պաթոլոգոանատոմիական մարմիններից (այսուհետ՝ Դիահերձարան) ստանում է մահվան պատճառի վերաբերյալ տեղեկանք:

22. Հայաստանի Հանրապետությունում գործող դիահերձարանները գտնվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ենթակայության տակ կամ մասնավոր ընկերություններ են:

23. Դիահերձարանից ստացված տեղեկանքը հուղարկավորության կազմակերպման ստանձնողի անձը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացությունների ակտերի գրանցման (այսուհետ՝ ՔԿԱԳ) ստորաբաժանում կամ համայնքի ղեկավարին, որտեղից ստանում է մահվան վկայականը: Համաձայն Քաղաքացիության կացության ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ նոյեմբերի 23-ի N 1910Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի «Թաղման և դիակիզման» կարգի 4-րդ կետի մահվան վկայականը տրվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների, իսկ գյուղական համայնքներում՝ համայնքի ղեկավարի կողմից:

24. Մահվան վկայականը ստանալուց հետո հուղարկավորության կազմակերպման ստանձնողի անձը դիմում է գերեզմանատները շահագործող կազմակերպությանը: Օրենքով մահացածի մարմինը հողին հանձնելու համար տրամադրվում է գերեզմանատեղ 2,5 քառ. մետր (1x2,5): Ընտանեկան գերեզման կազմակերպելու համար անվճար հիմունքներով տրամադրվում է առավելագույն 12.5 քմ: Օրենքով նախատեսված է, որ անվճար տրամադրվող հողատարածքից բացի հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի ցանկությամբ գերեզմանատանը կարող է վճարովի հիմունքներով տրամադրվել առավելագույնը 6 քառակուսի մետր հողատարածք, գերեզմանատան կառուցապատման սխեմայով համապատասխան

տարածքներ նախատեսված լինելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և վճարի դիմաց:

25. Աճյունասափորը (մահացածի մարմնի դիակիզումից հետո) հողին հանձնելու դեպքում համայնքային գերեզմանատներում անվճար հիմունքներով մեկ գերեզմանատեղի համար տրամադրվում է 1 քառակուսի մետր հողատարածք (1.0x1.0 մետր չափերով) կամ աճյունասափորը տեղադրվում է հուշապատի մեջ:

26. Ընտանեկան գերեզմանի առկայության դեպքում գերեզմանատեղը հատկացվում է այդ գերեզմանի տարածքում նախկինում տրված գերեզմանի վկայականի հիման վրա, որում կատարվում են համապատասխան գրանցումներ, ընդ որում հուղարկավորության կազմակերպումն ստանձնող անձը կարող է փոփոխվել, առանց նախկինի համաձայնության: Իսկ եթե նախկին վկայկանը չի տրամադրվում՝ նույն գերեզմանի վրա նոր հուղարկավորության կազմակերպումն ստանձնողին տրվում է գերեզմանի նոր վկայական:

27. ՔԿԱԳ-ի կողմից ստացված մահվան վկայականի հիման վրա Երևան քաղաքում՝ ՀՈԱԿ-ը համապատասխան գրանցում է կատարում (մատյանում գրանցում կատարելու եղանակով) նոր տեղ հատկացվելու կամ գերեզմանի վկայականի բացակայության դեպքում տրվում է նոր գերեզմանի վկայական: Գերեզմանի վկայականից չի երևում կոնկրետ որ հողակտորն է հատկացվել մահացողին:

## V. Հայաստանի Հանրապետությունում հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման խնդիրները

*Հայաստանի Հանրապետություն հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման զբաղվող մեկ միասնական մարմնի բացակայությունը.*

28. Հայաստանում չի գործում մեկ միասնական մարմին, ով կսահմանի միասնական չափանիշներ հուղարկավորության կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման վերաբերյալ, ինչպես նաև չկա միասնական վերահսկողություն իրականացնող մարմին, որի արդյունքում էլ առաջացել են ստորև ներկայացված խնդիրները:

29. Գրեթե բոլոր գերեզմանատները գտնվում են անմխիթար վիճակում, մասնավորապես՝
    1) անվճար հիմունքներով հատկացվող տարածքը փաստացի չի համապատասխանում դրա շահագործման պահանջներին,
    2) միջգերեզմանային տարածքները պահպանված չեն,
    3) հիմնականում չկան ջրամատակարարման, ջրահեռացման, լուսավորման համակարգեր, լավ չի կազմակերպվում մաքրման աշխատանքները, ճանապարհները ոչ բոլոր գերեզմանատներում են ասֆալտապատ,

4) գերեզմանատների տարածքներում ճանապարհների վրա կատարվել են հուղարկավորություններ,
5) որևէ միասնական ճարտարապետական տեսք գերեզմանները չունեն,
6) գերեզմաների բարեկարգման համար որևէ շինարարական նորմեր նախատեսված չեն,
7) օրենսդրությամբ որևէ մարմնին չի վերապահված լիազորություն վերահսկելու գերեզմանի կառուցապատման և շինարարական նորմերի պահպանման վրա,
8) գերեզմաների չափերը չեն համապատասխանում Օրենքով սահմանված չափերի,
9) գրեթե բոլոր գերեզմանատները չունեն պետական գրանցում,
10) ոչ բոլոր գերեզմանատները հաշվառված են,
11) գերեզմանատների գծագրերը, որոնք չեն գրանցված չեն համապատասխանում փաստացի իրենց զբաղեցրած տարածքների հետ:

*Հուղարկավորության կազմակերպումն օգտագործող անձի իրավունքները սահմանված չեն*

30. Գերեզմանատեղը տրամադրվում է հողի օգտագործման հիմունքով, սակայն փաստացի հողի օգտագործման իրավունքը որևէ գրանցում չի ստանում, որի արդյունքում անհասկանալի է մնում, թե ում իրավունքն է ծագում տվյալ գերեզմանատարածքի նկատմամբ, այսինքն, ով է այն անձը կամ անձինք, ով պատասխանատվություն են կրում և ով կամ ովքեր իրավունք ունեն թույլտվություն տալու տվյալ գերեզմանատեղում հուղարկավորություն իրականացնել:

31. Ընտանիքի շրջանակը սահմանված չէ Օրենքով, որի արդյունքում հասկանալի չէ, ում ընտանիքի անդամի մասին է խոսքը:

*Ֆինանսավորում*

32. Օրենսդրությամբ նախատեսված չէ այն ֆինանսական միջոցների գոյացման աղբյուրները, որոնք պետք է նպատակային ուղղվեն գերեզմանատների կառուցապատման, շահագործման և պահպանման համար: Փաստացի այդ գումարները պետք է հատկացվի համայնքի կողմից, սակայն համայնքային բյուջեներում այդ ծախսերը չեն նախատեսվում:

*Փաստաթղթաշրջանառություն*

33. Հուղարկավորության կազմակերպումը ստանձնող անձը՝ հուղարկավորությունը կազմակերպելու համար փաստաթղթեր ստանում և փոխանցում է առնվազն երեք մարմինների միջև, ոչ բոլոր գերեզմանատեղերն են հաշվառված, բացակայում է փաստաթղթաշրջանառության միասնական հարթակ:

*Մասնավոր գերեզմանատներ*

34. Օրենքով նախատեսված են մասնավոր գերեզմանատների համար արհեստական խոչընդոտներ: Մասնավոր գերեզմանների կառուցապատման թույլտվությունը

տրվում է համայնքի կողմից, այն դեպքում երբ ներկայումս համայնքը մրցակից է մասնավոր գերեզմանատներին: Այսինքն, կամ պետք է օրենքով արգելել մասնավոր գերեզմանատների ստեղծումը կամ այնպիսի պայմաններ պետք է ամրագրվի, որ մասնավոր ընկերությունները շահագրգռված լինեն ներդրում կատարելու:

## VI. Առաջարկվող փոփոխությունները

*Սահմանել Հայաստանի Հանրապետություն հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման զբաղվող մեկ միասնական մարմին.*

35. Առաջարկում ենք սահմանել Հայաստանի Հանրապետություն հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման զբաղվող մեկ միասնական մարմին՝ որը պետք է վերապահվի Լիազոր մարմնին:

36. Օրենքով վերապահել լիազորություն լիազոր մարմնի կողմից սահմանելու գերեզմանների կառուցապատման և բարեկարգման չափորոշիչները, ինչպես նաև շահագործման կանոնները:

37. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով նախատեսել պատասխանատվություն գերեզմանի օգտագործողների համար՝ Օրենքի և այլ իրավական ակտերի պահանջները խախտելու համար՝ գերեզմանին հատկացված չափսերից ավել չափերով գերեզման կառուցելու համար, ինչպես նաև վերանայել տուգանքի չափերը:

38. Վերահսկողությունը առաջարկում ենք վերապահել քաղաքաշինության ոլորտում գործող տեսչական մարմնին: Տեսչական մարմնի վերահսկողության առարկան պետք է վերապահել՝ գերեզմանների կառուցապատելու, բարեկարգելու և շահագործելու՝ քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերի պահանջներին համապատասխան, վերահսկել վերգերեզմանային կառույցների կառուցապատման վրա, կասեցնել գերեզմանի շինարարությունը, եթե այն չի համապատասխանող սահմանված չափորոշիչներին, ինչպես նաև ապօրինի շինարարություն կատարողին ենթարկել վարչական պատասխանատվության:

39. Օրենքով սահմանել տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունները, այդ թվում, որ պարտավոր են տրամադրել միասնական հարթակին հուղարկավորության վերաբերվող նախապես սահմանված տվյալները, ինչպես նաև պետական գրանցում կատարել գերեզմանատան:

40. Անցումային դրույթներով սահմանել ժամկետ էլեկտրոնային հարթակ ստեղծելու համար և գրանցում չունեցող գերեզմանների հաշվառման համար: Այն գերեզմանները, որոնք սահմանված ժամկետում չեն հաշվառի, դրանց կառավարման իրավասությունը փոխանցվել տեղական ինքնակառավարման մարմնին, սակայն այն

կարող է թույլատվություն տալ այնտեղ հուղարկավորել տվյալ գերեզմանում հուղարկավորվածների բացառապես ընտանիքի անդամներին:

41. Օրենքով անհրաժեշտ է սահմանել մահացածի հարազատների և ընտանիքի անդամների շրջանակը:

42. Անցումային դրույթներով սահմանվելու են դրույթներ այն գերեզմանների վերաբերյալ, որոնք փաստացի առկա են, սակայն այդ գերեզմանների վերաբերյալ բացակայում է գերեզմանի վկայականը: Նշված դեպքում այդ գերեզմանի վերաբերյալ վկայականը տրամադրվում է փաստացի չափերի համապատասխան՝ Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա մեջ տվյալ գերեզմանում հուղարկավորված հանգուցյալներից մեկի ընտանիքի առաջինը դիմած անդամին: Նշված ժամկետում որևէ անձի կողմից դիմում չներկայացնելու պայմաններում տվյալ գերեզմանի օգտագործման իրավունքն անցնում է համայնքին: Անհրաժեշտ է ամրագրել նաև բաց թողած ժամկետը հարգելի համարող դրույթները:

*Սահմանել հուղարկավորության կազմակերպումն օգտագործող անձի իրավունքները*

43. Օրենքում կատարել լրացում «գերեզմանի օգտագործող» հասկացության վերաբերյալ, սահմանելով որ «գերեզմանի օգտագործողը» հանդիսանում է այն անձը, ում անվամբ գրանցված է գերեզմանը միասնական էլեկտրոնային շտեմարանում: Գերեզմանի օգտագործողի մահվան դեպքում վերջինիս իրավունքները փոխանցվում են իր ժառանգներից նրան, ով առաջինը դիմում է ներկայացնում այդ կարգավիճակը ստանալու համար: Օրենքով ամրագրել, որ գերեզմանի կառուցապատման աշխատանքները կարող է իրականացվել բացառապես գերեզմանի օգտագործողի կողմից, միայն վերջինս իրավունքն ունի թույլատրել հողարկավորությունը իր կողմից օգտագործվող գերեզմանում, ինչպես նաև վերջինս է պատասխանատվություն կրում ապօրինի շինարարության համար, եթե չի ապացուցում, որ ապօրինի շինարարությունը կատարվել է իր կամքից անկախ:

44. Օրենքով անհրաժեշտ է սահմանել, որ գերեզմանի օգտագործողը կարող է իր իրավունքները փոխանցել այլ անձի, ինչպես նաև իրավունք ունի հողարկավորվել իր գերեզմանում:

45. Այն գերեզմանները, որոնք կառուցված են լինելու գերեզմանատների սահմաններից դուրս կամ գերեզմանատների հիմնական ճանապարհների վրա չեն կարող ստանալ նոր գերեզմանների վկայականներ, հետևաբար այդ տարածքներում չի թույլատրվելու նոր հուղարկավորության կազմակերպումը:

46. Անցումային դրույթներով անհրաժեշտ է սահմանել գերեզմանի վկայականի տրամադրումը փաստացի չափերի վերաբերյալ:

*Ֆինանսավորում*

47. Համայնքը նաև պարտավոր է ապահովել գերեզմանատների ճանապարհների կառուցապատումը, ջրահեռացման, ջրամատակարարման, լուսավորության խնդիրները, ընդ որում այդ խնդիրները լուծելու համար համայնքը բյուջեով պարտավոր է նախատեսել ֆինանսական միջոցներ: Անվճար տրամադրվելու է 3x2,5մ չափերով գերեզմանոց, իսկ լրացուցիչ տարածք կարող է տրամադրվել միայն վճարովի հիմունքներով, որից ստացված գումարը պետք է ուղղվի գերեզմանատան վերը նշված աշխատանքների կատարմանը: Գանձվող գումարը պետք է սահմանի համայնքը և այն պետք է գանձվի համայնքի բյուջեում:

*Փաստաթղթաշրջանառությունը*

48. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում է փաստաթղթերի գեներացումը միասնական էլեկտրոնային շտեմարանում: Այսինքն, սահմանել փաստաթղթերի շրջանակը, որոնք պետք է գեներացվեն մեկ հարթակում: Այդ հարթակից քաղաքացիներն իրավունք են ունենալու անվճար ստանալ ցանկացած տեղեկատվություն, բացառության այն տեղեկատվությանը, որը պարունակում է անձնական կամ ընտանեկան գաղտնիք:

*Մասնավոր գերեզմանատներ*

49. Օրենքով անհրաժեշտ է վերանայել մասնավոր գերեզմանատներին թույլտվություն տվող մարմինը, այն վերապահելով լիազոր մարմնին:

## VII. Ակնկալվող արդյունքը

*Կսահմանվի Հայաստանի Հանրապետություն հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման զբաղվող մեկ միասնական մարմին.*

50. Արդյունքում Հայաստանի Հանրապետությունում գործելու է մեկ միասնական մարմին, որի կողմից կսահմանվեն գերեզմանատների և գերեզմանների կառուցապատման միասնական չափանիշները:

51. Նախագծի ընդունման արդյունքում կկասեցվի կամ կնվազեցվի գերեզմանատների ծավալների մեծացումը: Մասնավորապես նախագծով նախատեսվում է ներկայիս անվճար տրամադրվող 12 քմ հողատարածքը փոխարինել 7,5 քմ հողատարածքով, այսինքն գերեզմանատների ծավալի մեծացումը կկրճատվի 37,5%:

*Սահմանվելու են հուղարկավորության կազմակերպումն օգտագործող անձի իրավունքները*

52. Օրենքով սահմանվելու է գերեզմանների օգտագործման իրավունք ունեցող անձի կարգավիճակը, ինչպես նաև իր իրավունքներիը և պարտականությունները:

53. Գերեզմանը օգտագործողին իրավունք է վերապահվելու տվյալ գերեզմանում հերթական հուղարկավորություն կատարելը, ինչպես նաև տվյալ գերեզմանին ամրակցված կառույցները պահպանելու և գերեզմանը բարեկարգելու մասով:

54. Օրենքով լուծվելու է գերեզմանի օգտագործողի իրավունքների փոխանցման, ժառանգման և վերջինիս հուղարկավորության խնդիրները:

55. Գերեզմանները, որոնք կառուցված են լինելու գերեզմանատների սահմաններից դուրս կամ գերեզմանատների հիմնական ճանապարհների վրա չեն ստանա նոր գերեզմանների վկայականներ, հետևաբար այդ տարածքներում չի թույլատրվի նոր հուղարկավորության կազմակերպումը:

56. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքով կնախատեսվի պատասխանատվություն ֆիզիկական անձանց համար Օրենքի պահանջները խախտելու դեպքերում, մասնավորապես՝ գերեզմանի վկայականով հատկացված չափսերից ավել չափերով գերեզմանի կառուցապատման, անօրինական կամ չափանիշներին չհամապատասխանող շինարարություն կատարելու համար:

57. Հաշվառում չունեցող գերեզմանները փաստագրվեն, որի արդյունքում գերեզմանի օգտագործողները կստանան՝ գերեզմանի վկայականներ, իսկ տիրազուրկ գերեզմանների կառավարումը կանցնի համայնքներին:

*Ֆինանսավորում*

58. Լրացուցիչ գումարների հաշվին կձևավորվեն ֆինանսական միջոցներ, որոնք կուղղվեն համայնքային գերեզմանատների պահպանման, բարեկարգման, գերեզմանատների ճանապարհների, լուսավորության, ջրամատակարարման, ջրահեռացման, մաքրման համար, ինչպես նաև գերեզմանատների սահմանների սխեմաների (հատակագծերի) ճշտման արդյունքում համապատասխան պետական գրանցման համար:

*Փաստաթղթաշրջանառությունը*

59. Ստեղծվելու է մեկ միասնական էլեկտրոնային հարթակ, որ տեղեկատվության պահպանումը և տեղեկատվության տրամադրումն կազմակերպվելու է այնպես, որ քաղաքացին հնարավորություն ունենա ազատ ստանալու տեղեկատվություն ինտերնետային հարթակից:

*Մասնավոր գերեզմանատներ*

60. Հայաստանում կձևավորվեն մասնավոր գերեզմանատներ: Քաղաքացիները կստանան այլընտրանքային տարբերակ հուղարկավորությունները կազմակերպելու համար:

Հավելված 1

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ մարզերում և Երևան քաղաքում առկա գերեզմանատների վերաբերյալ

| Հ/Հ | Մարզի անվանումը | Գերեզմանատների քանակը | Գերեզմանատներին հատկացված տարածքի մակերեսը (հա) |
|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 |
| 1 | *Արագածոտն* | 181 | 370 |
| 2 | *Արարատ* | 118 | 341 |
| 3 | *Արմավիր* | 107 | 348 |
| 4 | *Գեղարքունիք* | 296 | 531 |
| 5 | *Լոռի* | 207 | 443 |
| 6 | *Կոտայք* | 132 | 403 |
| 7 | *Շիրակ* | 182 | 331 |
| 8 | *Սյունիք* | 173 | 244 |
| 9 | *Վայոց ձոր* | 74 | 103 |
| 10 | *Տավուշ* | 210 | 231 |
| 11 | *Երևան* | 22 | 561 |
| Ընդամենը | | 1702 | 3907 |

* «Եռաբլուր» զինվորական պանթեոն-հուշահամալիր» պետական հիմնարկի զբաղեցրած տարածքը ներառված չէ:

*Տեղեկատվությունը հավաքագրվել է ՀՀ մարզպետարաններից և համայնքապետարաններից (հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ բոլոր համայնքները ունեն հաստատված գլխավոր հատակագծեր, ուստի սույն տեղեկատվությունը կարող է փոփոխվել):

Հավելված 2

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## Երևան քաղաքում առկա գերեզմանատների վերավերյալ

| հ/հ | Գերեզմանատ անվանումը | Թաղային համայնքը | Գերեզմա-նատան կազմակերպման տարեթիվը | Զբաղ. հող.մակ. հա. | Գերեզմ. ռեժիմը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Արին-Բերդ | Էրեբունի | 1960 | 154.0 | բաց |
| 2. | Կենտրոնական | Էրեբունի | 1930 | 72.1 | բաց |
| 3. | Մուշական-Ջրաշեն | Էրեբունի | 1940 | 7.3 | բաց |
| 4. | Նուբարաշեն | Նուբարաշեն | 1924 | 5.9 | բաց |
| 5. | Շենգավիթ | Շենգավիթ | 2002 | 15.5 | բաց |
| 6. | Նորագավիթ-1 | Շենգավիթ | 1940 | 9.0 | մ/փ |
| 7. | Նորագավիթ-2 | Շենգավիթ | 1960 | 4.0 | մ/փ |
| 8. | Ներքին Չարբախ | Շենգավիթ | 1946 | 6.4 | մ/փ |
| 9. | Քաղաքայի պանթեոն | Շենգավիթ | 1937 | 1.74 | բաց |
| 10. | Կարմիր-Բլուր | Շենգավիթ | 1925 | 25.3 | բաց |
| 11. | Հաղթանակ | Մալաթիա Սեբաստիա | 1948 | 13.3 | մ/փ |
| 12. | Շահումյան-1 | Աջափնյակ | 1940 | 8.9 | մ/փ |
| 13. | Շահումյան-2 | Աջափնյակ | 1963 | 72.6 | բաց |
| 14. | Սպանդարյան | Աջափնյակ | 2005 | 20.5 | բաց |
| 15. | Միլիկյան | Աջափնյակ | 1949 | 36.5 | բաց |
| 16. | Աջափնյակ | Աջափնյակ | 2002 | 53.0 | բաց, չի շահա-գործվում |
| 17. | Դավթաշեն | Դավթաշեն | 1950 | 15.1 | մ/փ |
| 18. | Քանաքեռ | Զեյթուն-Քանաքեռ | 1940 | 7.3 | բաց |
| 19. | Զեյթուն | Զեյթուն-Քանաքեռ | 1945 | 18.4 | բաց |
| 20. | Ավան | Ավան | 1947 | 4.2 | մ/փ |
| 21. | Նորք-Մարաշ | Նորք-Մարաշ | 1930 | 9.7 | բաց |
| | *Ընդամենը* | | | *560.34* | |

ՏԵՂԵԿԱՆՔ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 156.1. Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառում խախտումներ իրականացնելը**

1. ~~Հուղարկավորությունների կազմակերպումն իրականացնողների կողմից գերեզմանատների շահագործման և պահպանման գործառույթները չիրականացնելը կամ ոչ պատշաճ իրականացնելը, այդ թվում՝ քաղաքաշինական նորմերը խախտելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:~~

Գերեզմանն օգտագործողի կողմից գերեզմանի կառուցապատման, բարեկարգման և շահագործման օրենսդրությամբ սահմանված կանոնները, այդ թվում՝ քաղաքաշինական նորմերը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

2. Հուղարկավորությունների կազմակերպման և իրականացման համար նախատեսված կարգերն ու կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հիսնապատիկի չափով:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների ~~կամ նրանց լիազորած անձանց կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպության~~ կողմից համայնքային գերեզմանատներում գերեզմանատեղի~~, ինչպես նաև ընտանեկան գերեզմանի~~ կազմակերպման համար անվճար կամ վճարովի հիմունքներով տրամադրվող հողատարածքների սահմանված չափերից ավելին տրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

**Formatted:** Indent: First line: 0 cm

**Formatted:** Font: Font color: Auto

**Formatted:** No Spacing, Indent: First line: 0 cm, Pattern: Clear, Tab stops: 16.51 cm, Left

**Formatted:** Indent: First line: 0 cm

4. Գերեզմանատան կազմակերպման համար նախատեսված վայրերից դուրս հուղարկավորության իրականացումը՝

**Formatted:** Indent: First line: 0 cm

առաջացնում է տուգանքի նշանակում՝ ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հազարապատիկի չափով:

5. Փակ գերեզմանատներում գերեզմանատեղի հատկացումը՝

**Formatted:** Indent: First line: 0 cm

առաջացնում է տուգանքի նշանակում՝ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հինգհարյուրապատիկի չափով:

6. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նոր գերեզմանատների և դիակիզարանների կազմակերպման համար հողատարածքների տրամադրման դեպքում օրենքով սահմանված նորմերը և պարտադիր պահանջներն ու պայմանները խախտելը՝

**Formatted:** Indent: First line: 0 cm

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

7. Գերեզմանատների կազմակերպման համար տրամադրված հողատարածքներում նպատակային և գործառնական նշանակությանը հակասող ցանկացած գործունեություն իրականացնելը՝

**Formatted:** Indent: First line: 0 cm

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

8. Գերեզմանատներում հուղարկավորությունների կազմակերպումն իրականացնող մարմինների կողմից գերեզմանատեղերի հաշվառման, հուղարկավորությունների գրանցման մատյանների վարման, գերեզմանների վկայականի տրամադրման գործառույթները չիրականացնելը՝

**Formatted:** Indent: First line: 0 cm

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

9. Մասնավոր գերեզմանատների կազմակերպման և շահագործման համար օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներն ու պայմանները խախտելը՝

**Formatted:** Indent: First line: 0 cm

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հազարապատիկի չափով:

Սույն մասի առաջին պարբերությամբ նշված իրավախախտումը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

**Formatted:** Indent: First line: 0 cm

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից երկուհազարապատիկի չափով:

10. Սույն հոդվածի 9-րդ մասի առաջին պարբերությամբ սահմանված խախտումը վերացնելու մասին պետական լիազոր մարմնի ցուցումները չկատարելը՝

**Formatted:** Indent: First line: 0 cm

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ չորսհազարապատիկի չափով:

11. Վերահուղարկավորության իրականացումը օրենքով սահմանված պահանջների խախտմամբ՝

**Formatted:** Indent: First line: 0 cm

առաջացնում է տուգանքի նշանակում՝ ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրապատիկի չափով:

12. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից առանց քաղաքաշինական փաստաթղթերում օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող շինությունների առկայության և այլ պահանջների պահպանման՝ մասնավոր գերեզմանատների կառուցման համար շինարարական թույլտվությունների տրամադրումը՝

Formatted: Indent: First line: 0 cm

առաջացնում է տուգանքի նշանակում՝ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված ժամկետներում իրենց տարածքներում գտնվող գերեզմանատները Հայաստանի Հանրապետության կադաստրային կոմիտեում չգրանցելը, ինչպես նաև էլեկտրոնային միասնական շտեմարանում օրենսդրությամբ սահմանված ժամկետներում անհրաժեշտ տվյալների չտրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

14. Սույն հոդվածով բոլոր մասերով նախատեսված նույն արարքները, եթե կատարվել են կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ, վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

**Հոդված $219^{1}$. Տարածքային կառավարման մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները**

Տարածքային կառավարման մարմինները քննում են սույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ իրենց տնօրինության տակ գտնվող հողերի մասով, ինչպես նաև սույն օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 1-ին, 9-րդ մասերով, 152.1-ին հոդվածի 4-րդ մասով և 54.5-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Տեղական ինքնակառավարման մարմինները քննում են սույն օրենսգրքի 43.1-ին հոդվածի 2-8-րդ և 10-12-րդ մասերով, 48-րդ հոդվածով՝ իրենց տնօրինության տակ գտնվող հողերի մասով, 113-րդ, 124.7-րդ հոդվածով, 152.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով, 152.2-րդ հոդվածի 1-ին մասով, 156-րդ, 157-րդ հոդվածի 2-րդ մասով, 157.15-րդ, 158-րդ (բացառությամբ 2-րդ, 3-րդ, 12-րդ, 17-րդ, 19-րդ, 21-րդ, 23-րդ, 26-րդ և 27-րդ մասերի), 162-րդ, 169.14-րդ հոդվածի 4-րդ մասով, 180-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ

մասերով, 169.16-րդ, 189.11-րդ , 189.12-րդ և 189.18-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության սահմաններում քննում են նաև սույն օրենսգրքի 114-րդ, 154-րդ, 154.1-րդ, ~~156.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ մասնավոր գերեզմանատների մասով,~~ 2-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ մասերով, 169.1-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Տարածքային կառավարման մարմինների անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունեն մարզպետները, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների անունից՝ համայնքի ղեկավարները, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետը կամ նրա որոշմամբ սահմանված պաշտոնատար անձինք: